Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112389975, 2112335209 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<26>> 04 2021թ. 7-13 6788 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Վիկտոր Պետրոսյանի թիվ ՄԴ/26744-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարյան փողոցի 24Ա շենքի 39 բնակարանի բնակիչ (**էլեկտրոնային հասցե՝** <vahag210077@mail.ru>) Վիկտոր Պետրոսյանը դիմումում վկայակոչելով մի շարք օրենքներ խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112389975, 2112335209, 2112284113, 2112262896 որոշումները՝ նշելով, որ որշումներով արձանագրված իրավախախտումները իր կողմից չեն կատարվել:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկները չեն կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը,** որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ **վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից**: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ իրավախախտման հատկանիշների պարզելու համար, սահմանել է **15 աշխատանքային օր**, իսկ 7-րդ հոդվածի 1-ին մասը՝ վարչական ակտը ընդունելու համար, իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ **2 աշխատանքային օր**: Այսինքն վարույթ իրականացնող մարմինը վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կարող է ընդունել **17 աշխատանքային** օրվա ժամկետում:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112335209 որոշման հիմքում դրված իրավախախտումն արձանագրվել է 08.02.2021թ., իսկ վարչական ակտը կայացվել է 25.02.2021թ.՝ այսինքն վերը նշված օրենքով սահմանված ժամկետում:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112389975 որոշման հիմքում դրված իրավախախտումն արձանագրվել է 19.02.2021թ., իսկ վարչական ակտը կայացվել է 11.03.2021թ.՝ այսինքն վերը նշված օրենքով սահմանված ժամկետում:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի **եզրին զուգահեռ մեկ շարքով՝** բացառությամբ այն տեղերի /երթևեկելի մասի տեղային լայնացում/, որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112335209 որոշման իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 08.02.2021թ.-ին կանգառ է կատարել Երևան քաղաքի Թումանյան - Հանրապետության փողոցների խաչմերուկի հատվածում՝ մասնավորապես իրավախախտումն արձանագրած վայրում երկրորդ շարքում՝ ժամը 12:19:23-րդ վայրկյանից մինչև 12:21:01-րդ վայրկյանը, որի տևողությունն է 98 վայրկյան:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112389975 որոշման իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 19.02.2021թ.-ին կանգառ է կատարել Երևան քաղաքի Պուշկին – Նալբանդյան - Վարդանանց փողոցների խաչմերուկի հատվածում՝ մասնավորապես իրավախախտումն արձանագրած վայրում երկրորդ շարքում՝ ժամը 15:01:20-րդ վայրկյանից մինչև 15:02:39-րդ վայրկյանը, որի տևողությունն է 79 վայրկյան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) **նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը**, և **դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար <u>խոչընդոտ կամ վթարային իրադրություն</u> առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:**

Ինչ վերաբերվում է Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112284113, 2112262896 որոշումներին, ապա հարկ է նշել, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 2112284113, 2112262896 որոշումները Ձեր կողմից ստացվել է 22.02.2021թ-ին, ինչի մասին փոստային ծառայության կողմից Ճանապարհային ոստիկանությունը ծանուցվել է, հետևաբար 26.03.2021թ. դիմում ներկայացնելով, Ձեր կողմից բաց է թողնվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված՝ վերը նշված որոշման դեմ գանգատ տալու 30-օրյա ժամկետը:

Ինչ վերաբերվում է դիմումատուի պնդմանը, թե իրավախախտումները կատարվել են այլ անձի կողմից, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա սույն օրենսգրքով նախատեսված **վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը** (լիզինգի իրավունքի պետական գրանցման դեպքում՝ լիզինգառուն) (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը) կամ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքով նախատեսված՝ տրանսպորտային միջոցի շահագործող հանդիսացող անձը, **եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ**: Տուգանային միավորների ձևով նշանակվող վարչական տույժը կիրառվում է սույն մասում նշված անձանց նկատմամբ, եթե նրանք ունեն տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք:

Այսպիսով, Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112389975, 2112335209 որոշումներն օրինական են և իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112389975, 2112335209 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Վիկտոր Պետրոսյանին:

Ե.Կարապետյան

Կատարող Գ.Սարգսյան
Հեռ.՝ 060838402